

**ԾՐԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ**  
**ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովն (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի և ջրային տնտեսության բնագավառներում կարգավորող մարմին է, որը գործում է «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով», «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի ապրիլի 3-ի համապատասխան հրամանագրով և 2001 թվականի մարտի 7-ին ընդունված «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վերանվանվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով:

2003 թվականի մարտի 31-ին ընդունված «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողով:

Հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի, հիմնական գործառնություններն են՝

1. Էներգետիկայի բնագավառում.

ա) գործունեության լիցենզավորում, լիցենզիայի պայմանների սահմանում և դրանց վերահսկում,

բ) գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև, ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և(կամ) բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված, ինչպես նաև

էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցում,

գ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի, էներգետիկայի բնագավառում հաղորդման, բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի ծառայությունների մատուցման կարգավորվող սակագների սահմանում,

դ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման ու օգտագործման կանոնների սահմանում,

ե) իր իրավասությունների շրջանակում իրավական ակտերի սահմանում և դրանց կատարման վերահսկողություն,

զ) սպասարկման որակի նկատմամբ ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանում,

է) գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրում և սակագներում ներդրումների լրիվ կամ մասնակի ներառման վերաբերյալ որոշումների ընդունում,

ը) ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների վերլուծություն և գնահատում:

## 2. Ջրային տնտեսության բնագավառում.

ա) ջրային տնտեսության բնագավառում սակագնային քաղաքականության իրականացում,

բ) ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլատվության տրամադրում:

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի միջոցով (55 աշխատող, այդ թվում 12-ը՝ վարչատնտեսական), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

Սակագնային քաղաքականության վարչություն՝

- սակագնային բաժին,
- ֆինանսական վերլուծության բաժին.

Իրավաբանական և լիցենզավորման վարչություն.

Լիցենզավորված գործունեության մոնիթորինգի վարչություն.

Հասարակայնության հետ կապերի բաժին.

Վարչատնտեսական բաժին:

## **1. Կարգավորվող ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները**

Էներգետիկայի և ջրային տնտեսության բնագավառների ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա կատարվող վերլուծությունը, որպես հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը, հիմք է հանդիսանում ինչպես առանձին ընկերությունների գործունեության, այնպես էլ բնագավառների ամբողջական արդյունքների գնահատման, առկա հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծմանն ուղղված հանձնաժողովի որոշումների կայացման և օրենքով հանձնաժողովին վերապահված կարգավորման այլ մեխանիզմների կիրառման համար: Այն առանձնակի կարևորություն է ձեռք բերում սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի գնահատման վերաբերյալ հիմնավորված որոշումների ընդունման և լիցենզիայի պայմանների վերահսկման գործառնությունների իրականացման առումով:

### **1.1 Էներգետիկայի բնագավառ.**

Ստորև ներկայացվում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների 2002 թվականի տարեկան և 2003 թվականի առաջին կիսամյակի գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների համառոտ վերլուծությունը:

2002 թվականին սակագների հաշվարկների հիմքում դրված և 2002 թվականի փաստացի արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական էներգիայի համեմատական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Սակագների հաշվարկում Իրանի Իսլամական Հանրապետության հետ փոխանակվող հոսքերի մեծությունը հաշվի չի առնվել, քանի որ գործում է գրոյական հաշվեկշռով էլեկտրական էներգիայի փոխհոսքերի պայմանագիր: Հաշվի չեն առնվել նաև էլեկտրական էներգիայի արտահանման ծավալները, քանի որ դրանք կարգավորվում են առանձին պայմանագրերով:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 2002 թվականին հիդրոէլեկտրակայաններում փաստացի արտադրված էլեկտրական էներգիայի քանակը շուրջ 24,0%-ով գերազանցում

է սակագնի հաշվարկի հիմքում դրված ցուցանիշը, որը բացատրվում է հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության համար բարենպաստ հիդրոլոգիական պայմաններով:

**Էլեկտրաէներգետիկական համակարգի 2002 թվականի սակագներով նախատեսված և փաստացի ցուցանիշների համեմատություն**

Աղյուսակ 1


h/h	Անվանումը	Արտադրված և առաքված էլեկտրական էներգիա (մլն կՎտժ)		
		2002թ. սակագնով նախատեսված	2002թ. փաստացի	Տարբերություն 5=4-3
1	2	3	4	5
1	Էլեկտրաէներգիայի արտադրություն	5386,9	5524,6	137,7
1.1	այդ թվում՝ ՀԱԷԿ	2480,3	2282,2	-198,1
1.2	Հրազդանի ՋԷԿ	1160,94	1311,5	150,6
1.3	Երևանի ՋԷԿ	403,0	267,4	-135,6
1.4	Սևան-Հրազդանյան ՀԷԿՀ	326	378,5	52,5
1.5	Որոտանի ՀԷԿՀ	854,8	1116,2	261,4
1.6	Չորա ՀԷԿ	64,8	65,8	1,0
1.7	Մասնավոր փոքր ՀԷԿ-եր	97,03	103	6,0
2	Սեփական կարիքներ	375,9 6,98%	342,8 6,20%	-33,1
2.1	այդ թվում՝ ՀԱԷԿ	219,3 8,8%	203,7 8,9%	-15,6
2.2	Հրազդանի ՋԷԿ	92,30 8,0%	97,7 7,4%	5,4
2.3	Երևանի ՋԷԿ	50,00 12,4%	30 11,2%	-20,0
2.4	Սևան-Հրազդանյան ՀԷԿՀ	6,00 1,8%	5 1,3%	-1,0
2.5	Որոտանի ՀԷԿՀ	4,80 0,6%	3,4 0,3%	-1,4
2.6	Չորա ՀԷԿ	0,23 0,4%	0,28 0,4%	0,1
2.7	Մասնավոր փոքր ՀԷԿ-եր	3,24 3,3%	2,7 2,6%	-0,5
3	Արտադրող կայաններից էլեկտրաէներգիայի օգտակար առաքում(1-2)	5011,0	5181,8	170,8
3.1	այդ թվում՝ ՀԱԷԿ	2261	2078,5	-182,5
3.2	Հրազդանի ՋԷԿ	1068,64	1213,8	145,2
3.3	Երևանի ՋԷԿ	353	237,4	-115,6
3.4	Սևան-Հրազդանյան ՀԷԿՀ	320	373,5	53,5
3.5	Որոտանի ՀԷԿՀ	850	1112,8	262,8
3.6	Չորա ՀԷԿ	64,57	65,52	1,0
3.7	Մասնավոր փոքր ՀԷԿ-եր	93,79	100,3	6,5
4	Ներհոսք՝	0	306,2	306,2
4.1	որից՝ Արցախէներգո	0	33,3	33,3
4.2	հի՛հ	0	272,9	272,9
5	Մուտք բարձր լարման ցանց (3+4)	5011,0	5488,0	477,0
6	Կորուստներ բարձր լարման ցանցերում (% մուտքի նկատմամբ)	200 4,0%	259,4 4,7%	59,4
7	Առաքում բարձր լարման ցանցերից	4811,0	5228,6	417,6
7.1	այդ թվում՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր	4700,0	4554,4	-145,6
7.2	Այլ սպառողներ	0,0	14,3	14,3
7.3	Արտահոսք	111	659,9	548,9
7.3.1	որից՝ Արցախէներգո և Քաշաթաղ	111	95,4	-15,6
7.3.2	Վրաստան	0	196,7	196,7

7.3. 3	ԻԻՀ	0	367,8	367,8
8	Ընդամենը կորուստներ բաշխիչ ցանցերում (% բաշխիչ սանձի մուտքի նկատմամբ)	675,94 14,4%	1154 25,3%	478,06
9	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի հաշվեգրված առաքում	4024,06	3400,4	-623,66

2002 թվականին 2001 թվականի համեմատությամբ էլեկտրական էներգիայի արտադրությունը նվազել է 219.4 մլն կՎտժ -ով (3,8%), իսկ բաշխիչ ցանցերում ընդհանուր կորուստները նվազել են 6,85 մլն կՎտժ -ով (0,6%): Ընդ որում, տեխնոլոգիական հաշվարկային կորուստները նվազել են 8,78 մլն կՎտժ -ով, իսկ գերկորուստներն աճել են 1,93 մլն կՎտժ -ով:

2002 թվականի էլեկտրական էներգիայի արտադրության կառուցվածքը ներկայացված է նկար 1 -ում:

*Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը 2002 թվականին*



Նկար 1

2001 թվականի համեմատությամբ 2002 թվականի ընթացքում հիդրոէլեկտրակայաններում արտադրված էլեկտրական էներգիայի քանակն ավելացել է 696,5 մլն կՎտժ-ով (72%), որից 586,5 մլն կՎտժ-ը բաժին է ընկնում Որոտանի հիդրոէլեկ-

տրակայանների համալիրին: Հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության ծավալի նման աճը բացատրվում է 2002 թվականի բարենպաստ հիդրոլոգիական պայմաններով:

Հայկական ատոմային էլեկտրակայանում արտադրված էլեկտրական էներգիայի քանակն աճել է 295,5 մլն կՎտժ-ով (14.9 %): էլեկտրական էներգիայի արտադրության ընդհանուր ծավալի նվազման պայմաններում, բնականաբար, նվազել է Հրազդանի ջերմային էլեկտրակայանում արտադրված էլեկտրական էներգիայի քանակը՝ 1197,8 մլն կՎտժ -ով (47,7 %):

Ստորև համառոտ ներկայացվում են էլեկտրաէներգետիկական համակարգի 2002 թվականի գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները:

2002 թվականի ընթացքում բաշխիչ ցանցերի կողմից սպառողներին մատակարարվել և հաշվեգրվել է 3400,4 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, որն արժեքային արտահայտությամբ կազմել է 72637,3 մլն դրամ: Սակայն, նույն ժամանակահատվածում ֆինանսական միջոցների մուտքը կազմել է 65,9 մլրդ դրամ (91%): Այս ցուցանիշները՝ ըստ սպառողների խոշորացված խմբերի, ներկայացված են աղյուսակ 2 - ում:

*Բաշխիչ ցանցերի 2002 թվականի տեխնիկատնտեսական ցուցանիշները*

Աղյուսակ 2

h/h	Սպառողների խմբերը	էլեկտրա- էներգիայի հաշվեգրված առաքում	Ապրանքայի և արտադրանք (ԱԱՀ-ով)	Ֆինանսական միջոցների մուտք	Վճարման %
		մլն կՎտժ	մլն դրամ	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Բնակչություն	1222,3	30396,8	26925,4	89%
2	Բյուջետային կազմակերպություններ	182,1	4296,2	7062,7	164% *)
3	Արդյունաբերություն	768,0	13504,8	11226,5	83%
4	Տրանսպորտ	123,4	2061,9	1522,2	74%
5	Ոռոգում	228,1	4376,1	6835,7	156% *)
6	Խմելու ջուր	275,2	5038,0	1288,9	26%
7	Այլ սպառողներ	601,3	12963,4	11081,5	85%
8	Ընդամենը	3400,4	72637,3	65943,0	91%


\*) Վճարման 164% և 156% ցուցանիշները պայմանավորված են նախկին պարտքերի հավաքագրմամբ:

Համեմատության համար նշենք, որ 2001 թվականի ընթացքում բաշխիչ ցանցերի կողմից սպառողներին մատակարարվել և հաշվեգրվել է 3436 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, որն արժեքային արտահայտությամբ կազմել է 72485 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում ֆինանսական միջոցների մուտքը կազմել է 58738 մլն դրամ (81%):

Հանձնաժողովի գնահատմամբ, էլեկտրական էներգիայի գերկորուստների պատճառով 2002 թվականին բաշխիչ ցանցերի չստացած հասույթը կազմել է 15219 մլն դրամ: Եթե սրան հավելենք նաև 2002 թվականի ընթացքում մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներից չստացված 6694 մլն դրամը, ապա 2002 թվականին բաշխիչ ցանցերի չստացած ընդհանուր հասույթը կկազմի 21913 մլն դրամ: Նման իրավիճակը բացասական ազդեցություն է գործում էներգահամակարգի ֆինանսական վիճակի վրա՝ վտանգելով էլեկտրական էներգիայի հուսալի և անվտանգ արտադրության, հաղորդման և բաշխման գործընթացների ապահովումը:

Նկար 2-ում ներկայացված են էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական ձեռքվածքի վերաբերյալ (առանց ներհամակարգային պարտքերի) հանձնաժողովի կատարած վերլուծության արդյունքները:

*Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական ձեռքվածքը  
2003 թվականի հունվարի 1-ի դրությամբ  
(մլրդ դրամ)*



<sup>\*)</sup> ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի գնահատականը

Նկար 2

Նախորդ տարիների ընթացքում համակարգում գոյացել է 131,1 մլրդ դրամ կրեդիտորական պարտք, որի մարման համար առկա 25,2 մլրդ դրամ հուսալի



դեֆիտորական պարտքը բավարար չէ: Արդյունքում առաջացել է 105,9 մլրդ դրամ ֆինանսական ճեղքվածք: Համակարգի ֆինանսական ճեղքվածքը առանց բաշխիչ ընկերության կազմում է 85,4 մլրդ դրամ, որն ընթացիկ գործունեության արդյունքներով հնարավոր չէ մարել: Անհրաժեշտ է մշակել հատուկ մոտեցումներ՝ ներառելով ինչպես կառավարության աջակցությունը, այնպես էլ միջազգային կազմակերպությունների վարկային միջոցների ներգրավման հնարավորությունը:

Աղյուսակ 3 -ում ներկայացված է էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների 2001-2002 թվականներին հաշվեգրված ծախսերի համեմատությունը:

*էլեկտրաէներգետիկական համակարգի 2001 և 2002 թվականներին հաշվեգրված ծախսերի համեմատություն*

Աղյուսակ 3

մլն դրամ (առանց ԱԱՀ-ի)

h/h	Անվանումը	2001թ.	2002թ.	Տարբերություն 2002-2001թթ.	%
1	2	3	4	5	6
1	Վառելիք	37567	25160	-12407	-33,0%
2	Նյութական ծախսեր	3589	3642	52	1,5%
3	Նորոգման ծախսեր	3557	2460	-1097	-30,8%
4	Աշխատավարձ	11859	11954	95	0,8%
5	Սոց.ապահով.	2155	2070	-84	-3,9%
6	Մաշվածություն	6729	8284	1554	23,1%
7	Այլ ծախսեր	2855	4014	1159	40,6%
8	Մասհանումներ ՀԱԷԿ-ի հատուկ ֆոնդերին	1750	1383	-367	-21,0%
9	Վարկի սպասարկում	1886	3446	1561	82,8%
10	Ընդամենը	71947	62413	-9534	-13,3%

Վառելիքի հետ կապված ծախսերի նվազումը (12407 մլն դրամ) պայմանավորված է հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության ավելացմամբ:

Համառոտ կանգ առնենք նաև մասնավորեցումից հետո բաշխիչ ցանցերի գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշների վրա:

Բաշխիչ ցանցերի գործունեության 2002 և 2003 թվականների առաջին կիսամյակների տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 4 -ում:

*Բաշխիչ ցանցերի գործունեության 2002 և 2003 թվականների առաջին կիսամյակների տեխնիկատնտեսական ցուցանիշները*

Աղյուսակ 4

h/h	Անվանումը	Չափի միավոր	2002 թ. I-ին կիսամյակ	2003 թ. I-ին կիսամյակ
-----	-----------	----------------	--------------------------	--------------------------

1	2	3	4	5
1	Էլեկտրաէներգիայի մուտքը բաշխիչ ցանց	մլն Վտժ	2261,03	2401,8
2	Էլեկտրաէներգիայի կորուստները բաշխիչ ցանցերում, այդ թվում՝	մլն կՎտժ %	629,23 27,8 %	579,73 24,1 %
2.1	տեխնոլոգիական հաշվարկային կորուստներ	մլն կՎտժ %	264,86 11,7 %	286,73 11,9 %
2.2	գերնորմատիվային կորուստներ	մլն կՎտժ %	364,37 16,1%	293 12,2%
3	Էլեկտրաէներգիայի հաշվեգրված սպառում	մլն կՎտժ	1631,8	1822,1

2003 թվականի առաջին կիսամյակում 2002 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ բաշխիչ ցանց ավելի է մուտք գործել 140,77 մլն կՎտժ (6.22 %) էլեկտրական էներգիա, իսկ ընդհանուր կորուստները նվազել են 49,5 մլն կՎտժ -ով: Տեխնոլոգիական կորուստներն ավելացել են 21,87 մլն կՎտժ -ով, որը պայմանավորված է սպառման կառուցվածքի փոփոխությամբ՝ կապված ընդհանուր սպառման ծավալում ցածր լարման և ոչ ուղիղ բջիջներով սնվող սպառողներին մատակարարված էլեկտրական էներգիայի տեսակարար կշռի ավելացման հետ: Իսկ գերկորուստները նվազել են 71,37 մլն կՎտժ -ով:

Աղյուսակ 5-ում ներկայացված են բաշխիչ ցանցերի 2002 և 2003 թվականների առաջին կիսամյակների տեխնիկատնտեսական ցուցանիշները՝ ըստ սպառողների խոշորացված խմբերի:

*Բաշխիչ ցանցերի 2002 և 2003 թվականների առաջին կիսամյակների տեխնիկատնտեսական ցուցանիշները*

Աղյուսակ 5

h/h	Սպառողների խմբերը	2002թ. առաջին կիսամյակ				2003թ. առաջին կիսամյակ			
		Էլեկտրաէներգիայի հաշվեգրված առաքում	Ապրանքային արտադրանք (ԱԱՀ-ով)	Ֆինանսական միջոցների մուտք	Վճարման %	Էլեկտրաէներգիայի հաշվեգրված առաքում	Ապրանքային արտադրանք (ԱԱՀ-ով)	Ֆինանսական միջոցների մուտք	Վճարման %
		մլն կՎտժ	մլն դրամ	մլն դրամ	%	մլն կՎտժ	մլն դրամ	մլն դրամ	%
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Բնակչություն	614,1	15270,0	14695,6	96%	697,7	17306,4	17322,9	100,1% <sup>*)</sup>
2	Բյուջետային կազմակերպություններ	103,7	2479,4	2012,5	81%	106,9	2476,7	2416,1	97,6%
3	Արդյունաբերություն	344,9	6081,3	4913,6	81%	368,7	6476,8	6729,2	103,9% <sup>*)</sup>
4	Տրանսպորտ	61,4	1029,8	829,4	81%	62,0	1029,8	1122,9	109,0% <sup>*)</sup>
5	Ռոռզում	66,4	1287,6	2883,8	224% <sup>*)</sup>	79,0	1515,6	900,9	59,4%
6	Խմելու ջուր	138,8	2540,6	575,6	23%	130,1	2373,5	2336,8	98,5%

7	Այլ սպառողներ	302,5	6482,3	5471,3	84%	377,7	8225,9	8481,9	103,1% <sup>*)</sup>
8	Ընդամենը	1631,8	35170,9	31381,8	89%	1822,1	39404,8	39310,7	99,8%

\*) Վճարման 224%, 100,1%, 103,9%, 109,0% և 103,1% ցուցանիշները պայմանավորված են նախկին պարտքերի հավաքագրմամբ:

2003 թվականի առաջին կիսամյակում սպառողներին առաքվել է 1822,1 մլն կՎտժ էլեկտրական էներգիա՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը գերազանցելով 190,3 մլն կՎտժ -ով (11,7%), ինչն իր հերթին ապահովել է 4233,9 մլն դրամ ապրանքային արտադրանքի աճ (12%):

Ենթադրվում է, որ մինչև 2003 թվականի ավարտը էլեկտրական էներգիայի ընդհանուր կորուստների մակարդակը հետզհետե կնվազի, և տարվա միջինը կկազմի 21,5%՝ 2002 թվականի 25,3%-ի փոխարեն:

Մասնավորեցումից հետո 8 ամսվա ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը գնված էլեկտրական էներգիայի դիմաց ապահովել է 100 % վճարում, ինչը դրական ազդեցություն է գործել ամբողջ էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական վիճակի վրա:

Էներգետիկայի բնագավառի ընկերություններում 2004-2005 թվականներին կներդրվի ազգային հաշվային պլանին համապատասխանեցված և կարգավորմանը վերաբերող ենթահաշիվների համակարգը, որը հանդիսանալով ֆինանսական տեղեկատվության կազմակերպման համակարգի կարևորագույն տարր, կնպաստի կարգավորման արդյունավետության բարձրացմանը:

### 1.2 Ջրային տնտեսության բնագավառ

Ստորև ներկայացվում են ջրային տնտեսության բնագավառի կարգավորվող ընկերությունների 2002 թվականի տարեկան գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները:

Հանձնաժողովը 2003 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին իրականացրել է ջրային տնտեսության ընկերությունների 2002 թվականի գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների ուսումնասիրություն:

Ջրային տնտեսության բնագավառի ընկերությունների տվյալների համաձայն՝ 2002 թվականին ջրամատակարարման ցանց մուտք է գործել 544,5 մլն մ<sup>3</sup> խմելու ջուր, որի կորուստները կազմել են 364,8 մլն մ<sup>3</sup> (67 %՝ ցանց մուտք գործած ջրի նկատմամբ), իսկ առաքումը սպառողներին կազմել է 179,7 մլն մ<sup>3</sup>: Քաղաքային բնակավայրերի սպառողներին մատակարարվել է 160,2 մլն մ<sup>3</sup> խմելու ջուր, իսկ գյուղական բնակավայրերի սպառողներին՝ 19,5 մլն մ<sup>3</sup>: Ջրահեռացման ծավալը կազմել է 147,8 մլն մ<sup>3</sup>:

Ոռոգման ցանց մուտք է գործել 1186,8 մլն մ<sup>3</sup> ոռոգման ջուր, որի կորուստները կազմել են 482 մլն մ<sup>3</sup> (մուտք գործած ջրի 40,6%): Առաքումը սպառողներին կազմել է 704,8 մլն մ<sup>3</sup>:

Ջրային տնտեսության բնագավառի ընկերությունների կորուստների վերը նշված մեծությունները հիմնականում պայմանավորված են ոչ բավարար հաշվառման համակարգով, ներդրումների անբավարարությամբ, ինչպես նաև ջրային համակարգի ֆիզիկական մաշվածությամբ:

Ջրային տնտեսության բնագավառի ընկերությունների կողմից սպառողներին մատակարարված խմելու ջրի և ջրահեռացման ծառայության գծով հաշվեգրված հասույթը կազմել է 7490,17 մլն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), այդ թվում ջրամատակարարում` 6286,15 մլն դրամ, ջրահեռացում` 1204,02 մլն դրամ:

Ջրային տնտեսության բնագավառի ընկերություններում ջրամատակարարման ու ջրահեռացման գծով հաշվեգրված ծախսերը կազմել են 9630,95 մլն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), այդ թվում`

ռեսուրսավճար`	25,45 մլն դրամ,
էլեկտրաէներգիա`	4232,88 մլն դրամ,
հումք և նյութեր`	418,86 մլն դրամ,
աշխատավարձ`	1595,78 մլն դրամ,
սոց. ապահով. վճարներ`	372,57 մլն դրամ,
մաշվածություն`	1521,53 մլն դրամ,
նորոգումներ`	304,38 մլն դրամ,
այլ ծախսեր`	1159,5 մլն դրամ:

Ջրամատակարարման ու ջրահեռացման գծով հաշվեգրված վնասը կազմել է 2140,78 մլն դրամ:

Սպառողներին մատակարարված ոռոգման ջրի գծով հաշվեգրված հասույթը կազմել է 2972,55 մլն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ ոռոգման ջրի գծով հաշվեգրված ծախսերը` 8280,31 մլն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), այդ թվում`

ռեսուրսավճար`	19,96 մլն դրամ,
էլեկտրաէներգիա`	3714,69 մլն դրամ,
հումք և նյութեր`	538,12 մլն դրամ,
աշխատավարձ`	1240,61 մլն դրամ,
սոց. ապահով. վճարներ`	275,82 մլն դրամ,
մաշվածություն`	1246,92 մլն դրամ,

նորոգումներ`	1128,28 մլն դրամ,
այլ ծախսեր`	115,91 մլն դրամ:

Ոռոգման ջրի գծով հաշվեգրված վնասը կազմել է 5307,76 մլն դրամ:

Այսպիսով, 2002 թվականին ջրային տնտեսության բնագավառի ընկերություններում հիմնական գործունեության գծով հաշվեգրված վնասը կազմել է 7448,54 մլն դրամ:

Հաշվի առնելով պետական բյուջեից ջրային տնտեսության բնագավառի ընկերություններին տրված 5633,0 մլն դրամ սուբսիդիաները, վնասը կկազմի 1815,54 մլն դրամ:

2004 թվականին կշարունակվի ջրային տնտեսության բնագավառի ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերլուծությունը և ծախսերի արդյունավետության գնահատումը, որը հիմք կծառայի հիմնավորված սակագնային քաղաքականության իրականացման համար:

## ***2.Սակագնային քաղաքականություն***

### **2.1. Էներգետիկայի բնագավառ.**

Հանձնաժողովը 2003 թվականի հունվարին հաստատել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը, որով կարգավորվում է էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ` համակցված), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման, էլեկտրաէներգետիկայի և բնական գազի համակարգերի օպերատորների և էլեկտրաէներգետիկական շուկային այլ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագների և ծառայության վճարների սահմանման ու վերանայման գործընթացը: Նշված կարգով սահմանվել է նաև փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան:

Կարգավորվող սակագները կամ ծառայությունների համար վճարները հանձնաժողովի կողմից հաշվարկվում են անհրաժեշտ հասույթի ապահովման մեթոդով: Սակագները (ծառայության վճարները) պետք է ապահովեն.

- կարգավորվող ընկերության հուսալի և անվտանգ գործունեության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացումը,
- հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության փոխհատուցումը,
- ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթի ստացումը:

Էլեկտրական էներգիա արտադրող հինգ խոշոր կայանների և էլեկտրական էներգիա հաղորդող ընկերության համար շարունակում է գործել երկրորդ (հզորության ամսական վճար և էլեկտրական էներգիայի դրույք) սակագնային համակարգը, որը թույլ է տալիս ապահովել ընկերությունների հաստատուն ծախսերի փոխհատուցումը՝ անկախ արտադրվող էլեկտրական էներգիայի ծավալից, ինչպես նաև փոփոխական ծախսերի փոխհատուցումը, որոնք անմիջապես կախված են արտադրվող էլեկտրական էներգիայի ծավալից: Հաշվարկային կենտրոնի ծառայությունների համար սահմանված են հաստատագրված ամսական վճար և էլեկտրական էներգիայի արտահանման համար ծառայության սակագին:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության միջուկային վառելիքի գծով պարտավորությունների մարման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 20 -ի № 405Ա որոշման համաձայն «Սևան-Հրազդանյան կասկադ» փակ բաժնետիրական ընկերության գույքային համալիրը 25,0 մլն ԱՄՆ-ի դոլար արժեքով, հանձնվել է «PAO EՅC» ռուսական բաժնետիրական ընկերության «RAO NORDIC» ընկերությանը: Նույն որոշմամբ հանձնաժողովին առաջարկվել է «Սևան-Հրազդանյան կասկադ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի սակագինը սահմանելիս, հաշվի առնել ոչ ավելի քան հինգ տարում ներդրված գումարի վերադարձելիությունը: Այդ պատճառով վերանայվել է «Սևան-Հրազդանյան կասկադ» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագինը և այն սահմանվել 1 կՎտժ-ի համար 2 ԱՄՆ ցենտին համարժեք դրամ:

Նախատեսվում է վերանայել «Հրազդանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված համաձայնագրի, անհրաժեշտ է սահմանել սակագնի այնպիսի մակարդակ, որը թույլ կտա ապահովել գույքային համալիրի ձեռքբերման արժեքի՝ 31 մլն ԱՄՆ դոլարի, վերադարձը ոչ ուշ, քան 15 տարվա ընթացքում:

Ընթացիկ տարում վերանայվել են «Մուշեղ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ու «Շինարար» արտադրական կոոպերատիվի «Ամրակից-1» և «Ամրակից-2» փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները: Սահմանվել է «Ատլաս-էներգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նոր կառուցված «Այգեծոր» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը: Ընթացիկ

տարում և 2004 թվականին կշարունակվեն ևս մի շարք ընդհանուր առմամբ 7,35 Մվտ հզորությամբ փոքր հիդրոէլեկտրակայաններից («Բազենք» ՓԲԸ -ի «Եղեգիս-1», «Իզոդորոմ» ՍՊԸ -ի «Յաղդան», «Լեռ և ջուր» ՍՊԸ -ի «Արջուտ-2», Սյունիք ՍՊԸ -ի «Ապրես») առաքվող էլեկտրական էներգիայի սակագների սահմանումը և վերանայումը՝ հանձնաժողովի հաստատած փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկայով:

Հանրապետություն մուտք գործող բնական գազի ծավալների, ծախսային որոշ հողվածների, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը նախապատրաստվում է բնական գազի սակագների վերանայման հայտ ներկայացնել հանձնաժողով: Կախված հայտի քննարկման արդյունքներից, ինչպես նաև ելնելով վերը նշված և այլ գործոնների բազմակողմանի վերլուծությունից, հանձնաժողովը կտա էներգիայի մանրածախ սակագների 2004 թվականի հնարավոր աճի գնահատականները:

Համաձայն Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ջերմամատակարարման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարության հիմնադրույթների՝ Հայաստանի Հանրապետությունում ջերմամատակարարման համակարգերը պետք է զարգանան 2 ուղղություններով՝ կենտրոնացված և ապակենտրոնացված: Որպեսզի ջերմային էներգիան մրցունակ լինի այլընտրանքային էներգիայի աղբյուրների հետ, և ջերմամատակարարում իրականացնող ընկերություններն աշխատեն շահույթով, անհրաժեշտ են սակագնային քաղաքականության նոր մոտեցումներ: Հանձնաժողովը ձեռնամուխ է եղել այդ ուղղությամբ աշխատանքների իրականացմանը և 2004 թվականին կշարունակի նոր սակագնային քաղաքականության մշակման գործընթացը: Մոտեցումների հիմքում պետք է դրվի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, որի դեպքում կենտրոնացված ջերմամատակարարման ընկերությունները հնարավորություն կունենան մատուցել բարձրակ ծառայություն և ստանալ շահույթ: Իսկ ապակենտրոնացված ջերմամատակարարման պարագայում պետք է դիտարկել սակագների ազատականացման խնդիրը, այդ թվում նաև ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը կարգավորման դաշտից դուրս բերելու հնարավորությունն ու խնդիրների լուծման իրավասություններն աստիճանաբար սպառողներին՝ համատիրություններին վերապահումը:

Աշխատանքներ են տարվում կենսազանգվածի էներգիայի օգտագործման համաշխարհային փորձի ուսումնասիրության և Հայաստանի Հանապետության պայմանների համար կենսազանգվածի էներգիայի արտադրության տեխնիկատնտեսական հաշվարկների մշակման ուղղությամբ:

Հաշվի առնելով կենսազանգվածի էներգիայի օգտագործման բնապահպանական նշանակությունը շրջակա միջավայրի առողջացման առումով և նպատակ ունենալով խրախուսել էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման ոլորտում տեղական և արտասահմանյան ներդրումների ներգրավումը, հանձնաժողովը սահմանել է «Քաղաքային պինդ թափոններ-կենսազագ-էլեկտրաէներգիա» տեխնոլոգիական շրջափուլով գործող էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի առավելագույն սակագին՝ 7 ցենտ, առանց ավելացված արժեքի հարկի:

Հանձնաժողովն ակնկալում է, որ սահմանված սակագինը՝ Կիտոյի արձանագրությամբ ընձեռվող հնարավորություններով հանդերձ (արտանետումների առևտուր, բնապահպանական հիմնադրամներ և այլն), նպաստավոր պայմաններ կստեղծի այս ոլորտում ներդրումներ ներգրավելու համար:

Նախատեսվում է 2004 թվականին մշակել նաև կենսազագի օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեության իրականացման պայմանները:

Հանձնաժողովը ծրագրում է 2004 թվականի առաջին կիսամյակում ուսումնասիրել թափոնային այլ հումքերից էլեկտրական էներգիայի արտադրության միջազգային փորձը և Հայաստանի պայմանների համար սահմանել ողջամիտ սակագներ:

Վերլուծելով 2002 թվականի և 2003 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական ու ջերմային էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշները, ինչպես նաև հաշվի առնելով տնտեսության հեռանկարային զարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2004 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (հավելվածներ №№ 1, 2, 3):

Ինչպես երևում է № 1 հավելվածից, 2004 թվականին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն մուտք գործող էլեկտրական էներգիայի ծավալի աճ գրեթե չի նախատեսվում: Սակայն գերկորուստների նվազման արդյունքում բաշխիչ ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվեգրված սպառումը կավելանա շուրջ 260 մլն կՎտժ -ով (7%):



Մասնավոր ընկերությանը տրված լիցենզիայի անբաժան մաս կազմող սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի համաձայն, 2004 թվականին ընդհանուր կորուստները բաշխիչ ցանցերում նախատեսվում են 17%:

2004 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ ՀԱԷԿ -ի մասնաբաժինը նախատեսվում է 41,6%, ջերմային էլեկտրակայաններինը՝ 30,7% և հիդրոէլեկտրակայաններինը՝ 27,7%: Կանխատեսումներում հաշվի չի առնվել Որոտան-Արփա թունելի գործարկումից հետո «Որոտանի ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի արտադրության ծավալների կրճատումը:

Սևանա լճի մակարդակի բարձրացման նպատակով Որոտան-Արփա-Սևան թունելներով Սպանդարյանի ջրամբարից 165 մլն խմ ջուր տեղափոխելու դեպքում Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի ամենաէժան էլեկտրական էներգիա արտադրող էլեկտրակայանը՝ «Որոտանի ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը, պակաս կարտադրի շուրջ 460 մլն կՎտժ էլեկտրական էներգիա: Եթե տեղափոխված ամբողջ ջրի քանակը մնա Սևանա լճում, ապա էլեկտրական էներգիայի այս պակասը պետք է լրացնի «Հրազդանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը: Հաշվի առնելով այս երկու կայանների ներկայումս գործող էլեկտրական էներգիայի դրույքների 11,7 դրամ/կՎտժ տարբերությունը, Հայաստանի Հանրապետության էներգահամակարգում կառաջանա շուրջ 5,4 մլրդ դրամ լրացուցիչ ծախսի անհրաժեշտություն: Եթե դիտարկվի Սպանդարյանի ջրամբարից տեղափոխված 165 մլն խմ ջրից 100 մլն խմ ոռոգման նպատակով օգտագործելու տարբերակը, ապա Հայաստանի Հանրապետության էներգահամակարգում լրացուցիչ ծախսերը կկազմեն շուրջ 3,7 մլրդ դրամ:

2004 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ջերմային էներգիայի արտադրության աճը կանխատեսվում է 0,5% (հավելված № 2), իսկ բնական գազի ներկրման ծավալի աճը՝ 8,7% (հավելված № 3):

## 2.2. Ջրային տնտեսության բնագավառ.

2003 թվականին ուսումնասիրվել են ջրային տնտեսության բնագավառի 16 փակ բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը և այդ ընկերությունների վերջին երկու տարվա ֆինանսատնտեսական ցուցանիշները:

Հանրապետության ջրային տնտեսության բնագավառում իրականացվող բարեփոխումների համատեքստում կարևորվում և հրատապ լուծում է պահանջում ինքնաձախսածաճկող սակագների աստիճանաբար կիրառումը: Այդ առումով

առանձնապես կարևորվում է սակագնային ճիշտ քաղաքականության իրականացումը, որը պետք է խարսխված լինի տնտեսական արդյունավետության բարձրացման, ֆինանսական առողջացման և շրջակա միջավայրի պահպանության պահանջների ապահովման վրա:

Միջազգային մրցույթով ընտրված խորհրդատվական ընկերության կողմից մշակվել է հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների ֆինանսական առողջացման ինտեգրացված ծրագիր, որով նախատեսվում է ջրային տնտեսության բնագավառում իրականացնել մի շարք միջոցառումներ՝ կապված սպառողների հետ հարաբերությունների առևտրայնացման, շահագործման և կառավարման բնագավառում մասնավոր ընկերությունների ներգրավման, ինչպես նաև ֆինանսական հոսքերի կարգավորման միջոցով ընկերությունների ֆինանսական առողջացման հետ: Համաձայն այդ ծրագրի՝ հանրապետության ջրային տնտեսության բնագավառի ընկերությունները՝ սկսած 2007 թվականից, պետք է աշխատեն ինքնաձախսածաժկման սկզբունքով և շահույթով:

2004 թվականին աշխատանքներ կտարվեն այս բնագավառում սակագնային քաղաքականության հստակեցման և սակագների սահմանման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման և ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերլուծության ու գնահատման ուղղությամբ:

### **3. *Գործունեության լիցենզավորում***

2003 թվականի հունվարի 1-ից առ այսօր, Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը տրամադրել է գործունեության 6 լիցենզիա, որոնցից երկուսը՝ փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման, երեքը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, և մեկը՝ էլեկտրական էներգիայի արտահանման գործունեության: 2003 թվականի սկզբից մինչև սեպտեմբերի 1-ը, հանձնաժողովը ապահովել է 176,6 մլն դրամ տարեկան լիցենզիոն տուրքերի գանձում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: 2004 թվականի ընթացքում տարեկան լիցենզիոն տուրքերի մասով նախատեսվում ապահովել մոտ 192.3 մլն դրամ գանձում:

Կիրառելով 2001 թվականի մարտի 7-ին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով էներգետիկայի բնագավառում սահմանված կարգավորման սկզբունքները, 2004 թվականին շարունակվելու է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառուցվածքի զարգացման և շուկայի գործառույթները կանոնակարգող իրավական ակտերի, ինչպես նաև գործող և նոր պայմանագրերի

օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների մշակումը: 2004 թվականի ընթացքում հանձնաժողովը կմշակի և կհաստատի էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման (ԷՄՕԿ) նոր կանոնները:

#### **4. Կարգավորման իրավական դաշտի զարգացում**

2003 թվականի մարտի 31-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով ընդլայնվել է կարգավորող մարմնի կողմից իրականացվող գործառնությունների շրջանակը, ներառելով նաև ջրային տնտեսության բնագավառը: Նկատի ունենալով, որ ապագայում կարգավորման դաշտ է ներգրավվելու նաև հեռահաղորդակցությունը և բնական մենաշնորհների կարգավորումն իրականացվելու է մեկ միասնական մարմնի կողմից, «PPIAF» միջազգային ընկերության ֆինանսավորմամբ և Համաշխարհային բանկի աջակցությամբ «Econ One Research, Inc.» միջազգային խորհրդատվական ընկերությունը մշակում է բնական մենաշնորհների կարգավորման վերաբերյալ օրենքների նախագծերի փաթեթ, որով, ըստ Համաշխարհային բանկի հետ համաձայնեցված տեխնիկական առաջադրանքի, պետք է կարգավորվեն վերոհիշյալ բնագավառներում հարաբերությունները, հստակեցվեն կարգավորման մեխանիզմները: Դրան զուգահեռ, մեկ այլ միջազգային կազմակերպության՝ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական օժանդակության շրջանակում աշխատանքներ են իրականացվում հեռահաղորդակցության վերաբերյալ օրենքների մշակման ուղղությամբ: 2004 թվականին, մինչ վերոհիշյալ օրենքների ընդունումը, հանձնաժողովը աշխատանքներ կիրականացնի՝

- ՀՀ ջրային օրենսգրքում տեղ գտած անհամապատասխանությունների հայտնաբերման և դրանց շտկման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման,
- ՀՀ ջրային օրենսգրքով հանձնաժողովին վերապահված կարգերի մշակման և սահմանման,
- ջրային տնտեսության ոլորտում գործունեություն իրականացման պայմանների սահմանման,
- պայմանագրերի օրինակելի ձևերի մշակման ուղղությամբ:

Հաշվի առնելով, որ կարգավորման դաշտի ընդլայնումը և կարգավորման իրականացումը մեկ միասնական մարմնի կողմից համահունչ է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ծրագրին, ակնկալվում է, որ հաջորդ

տարվա սկզբին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կքննարկի վերը նշված օրենքները: Դրանց ընդունումից հետո հանձնաժողովը, իր իրավասությունների շրջանակում, կձևավորի ենթաօրենսդրական դաշտը՝ նպատակ ունենալով ապահովել օրենքների պահանջները և իրականացնել լիարժեք կարգավորում :

Նշված բարեփոխումների շրջանակներում լուծման կարիք ունեն նաև հետևյալ խնդիրները.

1. Հանձնաժողովի կառուցվածքային փոփոխության իրականացում, ինչը ենթադրում է աշխատակազմի թվաքանակի ավելացում և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ստեղծված պաշտոնների համար մրցույթների անցկացման միջոցով բարձրակարգ մասնագետների ներգրավում հանձնաժողովի աշխատանքներին, նոր պաշտոնների անձնագրերի մշակում և հաստատում:

2. Կարևորում ենք հանձնաժողովի աշխատակազմի աշխատավարձերի մակարդակների խնդիրը, քանի որ կապված բնագավառում իրականացվող մասնավորեցման գործընթացների հետ վերջին ժամանակաշրջանում կարգավորվող ոլորտներում տեղի է ունենում ղեկավար պաշտոնատար անձանց աշխատավարձերի զգալի աճ և այս պայմաններում աշխատանքային շուկայում պետական կարգավորող մարմնի մրցունակության ապահովման համար հանձնաժողովը պետք է հնարավորություն ունենա ապահովել աշխատավարձերի այնպիսի մակարդակ, որը կկանխի բարձրակարգ մասնագետների արտահոսքը մասնավոր հատված:

Կարևորում ենք նաև հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության խնդիրը, որի լուծման համար հանձնաժողովը կշարունակի իր աշխատանքները թե պետական մարմինների և թե միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով համալրել հանձնաժողովի նյութատեխնիկական բազան, ինչպես նաև շարունակել ստանալ միջազգային փորձի վրա հիմնված որակյալ խորհրդատվական օգնություն:

3. Շարունակվելու և ընդլայնվելու են միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ էներգետիկայի բնագավառի կարգավորման բազայի հիման վրա ստեղծված գործընկերային կապերը՝ նպատակ ունենալով հնարավորություն ստեղծել այլ կարգավորող հանձնաժողովների հետ հեռահաղորդակցության, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում փորձի փոխանակման ծրագրերի իրականացման, ինչպես նաև նոր ուսուցողական ծրագրերի կազմակերպման համար:

4. Բուն կարգավորման ընդլայնման առումով սկզբնական շրջանում խիստ կարևորում ենք ջրային տնտեսության բնագավառում գործունեության պայմանների, կարգերի, ինչպես նաև սպառողների և մատակարարի շահերի հավասարակշռման խնդիրներին ուղղված հիմնական փաստաթղթերի մշակումը:

### **5. Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն**

Համաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ հանձնաժողովի հիմնական գործառույթներից մեկը էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց լիցենզիաների պայմանների կատարման վերահսկումն է, որն ուղղված է այդ ընկերությունների գործունեության պարբերաբար ուսումնասիրությունների և համապատասխան վերլուծությունների միջոցով թերությունների հայտնաբերմանը և դրանց վերացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկմանը: Այս առումով 2004 թվականին իրականացվող լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգը և վերահսկողությունն ուղղված կլինեն նախատեսվող և կատարված ներդրումների արդյունավետության, նորոգման և վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի հիմնավորվածության գնահատմանը: Կգնահատվեն նաև նոր տեղակայված էներգակայանքների տեխնիկական ցուցանիշների առավելությունները, լիցենզավորված գործունեության կազմակերպման և կառավարման օպտիմալությունը, համակարգում անհրաժեշտ հզորությունների ապահովման համար կատարված շահագործման ծախսերի և տեխնիկական անխուսափելի կորուստների մեծությունները:

Կվերահսկվեն լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության իրականացման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման, սպա-ռողների սպասարկման պատշաճ որակի ապահովման գործընթացները, ինչպես նաև սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության պահպանման պայմանները:

2004 թվականին հանձնաժողովում կձևավորվի լիցենզավորված անձանց գործունեության բնագավառն ընդգրկող համակարգերի տեխնիկատնտեսական ցուցանիշների տեղեկատվական բազա:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմանների համաձայն՝ ընկերությունը պարտավոր է մինչև 2004 թվականի ապրիլ ամիսը հանձնաժողով ներկայացնել էլեկտրամատակարարման հուսալիության ցուցանիշների վերաբերյալ նախորդ 12 ամիսների հաշվետվությունը, ինչպես նաև այդ ցուցանիշների բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ծրագրերը, որոնց հիման վրա հանձնաժողովը կսահմանի սպառողների սպասարկման որակի հետևյալ ցուցանիշները:

- բոլոր սպառողների հոսանքազրկումների միջին հաճախությունը՝ խմբավորված ըստ հոսանքազրկման պատճառների,
- բոլոր սպառողների հոսանքազրկումների միջին տևողությունը,
- սպառողների բողոքների և հարցադրումների ընդհանուր քանակը,
- էլեկտրական էներգիայի լարման և հաճախականության թույլատրելի սահմաններից շեղման դեպքերի քանակն ու տևողությունը՝ իրականացնելով վերահսկողություն դրանց պահպանման նկատմամբ:

Ստացված տեղեկատվության վերլուծության միջոցով հանձնաժողովը կհետևի լիցենզավորված անձանց կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների ապահովմանը՝ բացառելով մատակարարող ընկերությունների հնարավոր կամայականությունները: Ելնելով լիցենզավորված ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների և սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծության արդյունքներից, կգնահատվեն դրանց համապատասխանությունը լիցենզիայի պայմաններին և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան միջոցներ կծեռնարկվեն ծառայությունների մատուցման չիմնավորված ընդհատումների կանխման, սպառողների դիմում-բողոքներին արձագանքելու ժամանակահատվածի կրճատման և էներգամատակարարման հուսալիության բարձրացման ուղղությամբ:

Շարունակելու է լիցենզավորման և սակագների վերանայման հայտերով ներկայացվող ֆինանսատնտեսական փաստաթղթերի մոնիթորինգի իրականացումը՝ նպատակ ունենալով իրատեսորեն գնահատել կատարված կապիտալ ներդրումների և շահագործման ու պահպանման ծախսերի հիմնավորվածությունը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գործունեության մոնիթորինգի ընթացքում համապատասխանաբար կվերահսկվի նաև էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների օգտագործման համապատասխանությունը սահմանված կարգերի պահանջներին, ինչպես նաև էներգամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկով որոշված սպառողների խմբի էներգամատակարարման առաջնահերթության պայմանների կատարումը:

«Հայրուսզազարդ» ՓԲԸ-ի գործունեության մոնիթորինգի ընթացքում կվերահսկվեն նաև բնական գազի ներկրման, փոխադրման (ներառյալ՝ պահեստավորման) և տարանցման հուսալիությունն ու անվտանգությունը, գազիֆիկացիայի և(կամ) գազամատակարարման վերականգնման դեպքում

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գործառույթների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և հանձնաժողովի որոշումներին, ինչպես նաև անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների կատարումը:

Կվերահսկվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունների երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումային ծրագրերի իրագործման ընթացքը:

Անհրաժեշտ վերահսկողություն կիրականացվի էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից համակարգի անվտանգության և հուսալիության ցուցանիշների մշակման և դրանց կատարման ընթացքի ուղղությամբ՝ հետևելով նաև համակարգային պլանավորման և կարգավարման գործընթացներին:

2004 թվականին հանձնաժողովը ձեռնամուխ կլինի նաև ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների պայմանների կատարման, այդ թվում ջրամատակարարների կողմից ջրօգտագործողներին մատուցվող ծառայությունների որակի վերահսկողությունը:

## ***6.Սպառողների հետ տարվող աշխատանքներ***

Ղեկավարվելով պետական քաղաքականության հիմնական սկզբունքներով, հանձնաժողովը մեծ նշանակություն է տալիս սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովման և շահերի հավասարակշռման խնդիրներին: Քննարկումներ են կազմակերպվում լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների, էներգիայի ու բնական գազի մատակարարման, ինչպես նաև սպառողներին ներկայացված վճարման հաշիվների վիճարկման վերաբերյալ:

Այդ գործառույթի շրջանակում հանձնաժողովը 2003 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ստացել է 38 գրավոր բողոք, շարունակում է գործել «հրատապ հեռախոսը»: «Հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում ստացվել են 135 հարցադրում և բողոք, որոնցում բարձրացված խնդիրներին տրվել են օպերատիվ լուծում կամ համապատասխան տեղեկատվություն: Սպառողների շրջանում բացատրական աշխատանք է տարվել էներգետիկայի բնագավառին վերաբերող իրենց

իրավունքներին ծանոթացնելու, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին և դրանից բխող իրավական ակտերին իրազեկելու ուղղությամբ:

Սպառողներից ստացված հարցադրումների և բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը, ինչպես և նախորդ տարիներին, վերաբերում են էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրմանը, էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց առաջացած պարտքերի մարման կարգին, հաշվառքի սարքերի ցուցմունքի տեսանելիության ապահովմանը, մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը (համապատասխան լարման ապահովում, այլ սպառողների չվճարումների պատճառով զանգվածային անջատումներ) հետ:

2003 թվականի ընթացքում սպառողների հետ կայացած հանդիպումներից պարզվել է, որ էներգետիկայի բնագավառի և սպառողների իրավունքների վերաբերյալ տպագիր նյութերի քանակը բավարար չէ, և միշտ չէ, որ դրանք հասու են բնակչությանը, իսկ էներգակիրների մատակարարման և օգտագործման կանոնները հաճախ պարունակում են բարդ իրավական և տեխնիկական մանրամասներ, որոնք ոչ միշտ են հասկանալի սպառողների լայն շերտերի համար:

Հաշվի առնելով վերը նշվածը, 2004 թվականին, միջոցների առկայության դեպքում, նախատեսվում է այդ թեմաներով հրապարակել հանրամատչելի թերթիկներ ու գրքույկներ և անվճար տրամադրել բնակչությանը:

Բարելավման կարիք ունի մարզերի բնակչության հետ կապը՝ տեղերում էներգամատակարարման, գազամատակարարման և ջրամատակարարման ոլորտներին առնչվող խնդիրները կարգավորելու համար: 2004 թվականին նախատեսվում է մարզերում կազմակերպել հանդիպումներ՝ բնակչությանն իրազեկելու, առկա հիմնախնդիրները վեր հանելու և համապատասխան ընթացք տալու նպատակով:

Հանձնաժողովը ծրագրում է 2004 թվականին սպառողների հետ կապը իրականացնել նաև էլեկտրոնային փոստի միջոցով, ինչը կնպաստի նրանց հուզող հարցերի պատասխանների ստացման ժամանակի կրճատմանը:

### ***7. Զանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ***

Հանձնաժողովի մամլո ծառայությունը, 2004 թվականին ևս, ծրագրել է ԶԼՄ-ների հետ աշխատել հրապարակայնության, թափանցիկության սկզբունքով, ինչը ենթադրում է հանձնաժողովի գործունեության մասին պարբերաբար հաղորդվող տեղեկատվություն, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ:



Նախատեսվում է նաև մամուլի ամենօրյա վերլուծության արդյունքում թղթակիցների բարձրացրած հարցերի, հիմնախնդիրների շուրջ հանձնաժողովի անդամների, աշխատակազմի մասնագետների, լրագրողների և շահագրգիռ անձանց մասնակցությամբ կազմակերպել հասարակական լսումներ, բանավեճ-քննարկումներ:

Շարունակվելու է գործակցությունը հասարակական, քաղաքական կազմակերպությունների հետ, որը ենթադրում է կլոր սեղանների, համատեղ ասուլիսների կազմակերպում, էներգետիկայի և ջրամատակարարման ոլորտներով հետաքրքրվող լրագրողների անմիջական մասնակցությամբ ինտերնետային կամուրջ-ասուլիսներ՝ Հարավային Կովկասի տարածաշրջանի համանման կառույցների հետ:

ՁԼՄ-ների հետ աշխատանքը առավել արդյունավետ դարձնելու նպատակով առավելագույնս կօգտագործվեն էլեկտրոնային փոստի հնարավորությունները: Կընդլայնվեն ՁԼՄ-ների հետ հանձնաժողովի մամլո ծառայության ամենօրյա շփումների ու ստեղծագործական աշխատանքի շրջանակները՝ փոխադարձ վստահության և բարեհաճության մթնոլորտում:

Հանձնաժողովի գործունեության թափանցիկության և հրապարակայնության հետագա ապահովումը ծրագրվում է իրականացնել հավաստի, օպերատիվ տեղեկատվության միջոցով հասարակության իրազեկման, մամլո հաղորդագրությունների, տարեկան ամփոփ հաշվետվությունների հրապարակման ճանապարհով:

2004 թվականին առավել կարևորվում է միջպետական համանման կառույցների մամլո ծառայություններին ինտեգրման գործընթացը, ինչը ենթադրում է փոխայցելություններ, փորձի փոխանակում, համատեղ ծրագրերի մշակում:

Ծրագրվում է պարբերաբար թարմացնել ինտերնետային էջի ( [www.rcnm.am](http://www.rcnm.am)) նյութերը՝ այնտեղ տեղադրելով հանձնաժողովի կողմից ընդունված նոր որոշումները, ենթաօրենսդրական ակտերը, կարգավորման ոլորտում տնտեսվարող սուբյեկտների լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունները, ինչպես նաև՝ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ մամուլում հրապարակված նյութերը:

## **8. Համագործակցություն**

Հանձնաժողովը, իրեն վերապահված իրավասությունների և պարտականությունների շրջանակների ընդլայնմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է համարում միջազգային փորձի ուսումնասիրման, մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացները և այդ առումով 2004 թվականին նույնպես

կշարունակի գործակցությունը միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

2004 թվականին կշարունակվի մասնակցությունը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Կրթությամբ զարգացման ակադեմիայի (AED) կողմից կազմակերպվող սեմինարներին, ինչպես նաև ակտիվ գործունեությունը Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 19 երկրների կարգավորող հանձնաժողովների ընկերակցության (ERRA) շրջանակներում:

2004 թվականին շարունակվելու է աշխատանքը միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ՝ էներգետիկայի բնագավառի կարգավորման բազայի վրա ստեղծված գործընկերային կապերն ընդարձակելու և հեռահաղորդակցության, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում մասնագետների ու փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորություն ստանալու նկատառումներով: Կշարունակվեն և կկատարելագործվեն սերտ հարաբերությունները ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի Հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ՝ հաշվի առնելով կարգավորման բնագավառում այդ կառույցի բազմամյա փորձը:

Հանձնաժողովի մասնագետները մասնակցում են վերականգնվող էներգաբաղադրանքների օգտագործմանը և հողմաէներգետիկային նվիրված միջազգային համաժողովներին, որը հնարավորություն է ընձեռում ծանոթանալ այդ բնագավառների կարգավորման արտասահմանյան փորձին և հարստացնել հանձնաժողովի տեղեկատվական բազան:

2004 թվականին ծրագրվում է ընդլայնել համագործակցությունը Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ՝ հատկապես նոր վերականգնվող էներգաբաղադրանքների օգտագործման ոլորտում: Մասնավորապես, համաձայնություն է ձեռք բերվել ՎՋԵԲ-ի կողմից մեթոդոլոգիական աջակցության հարցում՝ վերականգնվող էներգետիկայում գնագոյացման և սակագնային քաղաքականության առանձնահատկությունների և եվրոպական փորձի փոխանակման առումներով:

Հանձնաժողովը, ՀՀ էներգետիկայի նախարարության հետ համատեղ, սերտ համագործակցության մեջ է ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի հետ, որի 2004 թվականի աշխատանքային ծրագրի հիմնական խնդիրներից է ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ շուկայի ձևավորման հայեցակարգի մշակումը: Այդ խնդիրը համահունչ է Հայաստանում էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ձևավորման և կառուցվածքի ներկայումս քննարկվող խնդիրներին և հանձնաժողովի

ներկայացուցչի մասնակցությունը գործադիր կոմիտեի աշխատանքային խմբին կնպաստի հավասարակշռված և ողջամիտ որոշումների ընդունմանը՝ այդ թվում նաև շուկաների հետագա ինտեգրման ենթատեքստով:

**ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2003-2004թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՒՆԵՐԸ**

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2003 թ. սպասվող	2004 թ. կանխատեսվող
1	2	3	4	5
1	Էլեկտրաէներգիայի արտադրությունը, ընդամենը	մլն կվտժ	5530	5910
1.1	այդ թվում՝ ՀԱԷԿ	"-	2070	2460
1.2	ՀԷԿ -եր	"-	1805	1635
1.2.1	որից՝ Սևան-Հրազդանյան կասկադ	"-	440	400
1.2.2	Որոտանի ՀԷԿՀ	"-	1200	1060
1.2.3	Չորա ՀԷԿ	"-	65	65
1.2.4	Մասնավոր փոքր ՀԷԿ -եր	"-	100	110
1.3	ԶԷԿ-եր	"-	1655	1815
1.3.1	որից՝ Հրազդանի ԶԷԿ	"-	1395	1465
1.3.2	Երևանի ԶԷԿ	"-	260	350
2	Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար	մլն կվտժ	350	370
2.1	Նույնը՝ %-ով 1 -ին կետի նկատմամբ	%	6,3%	6,3%
3	Առաքում կայաններից	մլն կվտժ	5180	5540
4	Ներհոսք	մլն կվտժ	310	200
5	Ընդամենը մուտք բարձր լարման էլեկտրաջանցքեր	մլն կվտժ	5490	5740
6	Կորուստները բարձր լարման էլեկտրաջանցքերում	մլն կվտժ	237	245
6.1	Նույնը՝ %-ով 5-րդ կետի նկատմամբ	%	4,32%	4,27%
7	Արտահոսք	մլն կվտժ	553	735
8	Մուտք Հայաստանի էլեկտրական ցանցեր	մլն կվտժ	4700	4760
9	Կորուստները բաշխիչ ցանցերում	մլն կվտժ	1010	810
9.1	Նույնը՝ %-ով 8 -րդ տողի նկատմամբ	%	21,5%	17,0%
10	Էլեկտրաէներգիայի առաքումը բաշխիչ ցանցերից	մլն կվտժ	3690	3950

\*) Էլեկտրաէներգիայի ծախսը կայանների տնտեսական կարիքների համար

**ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2003-2004թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՒՆԵՐԸ**

1	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2003թ. սպասվող	2004թ. կանխատեսվող
1	2	3	4	5
1	Ջերմային էներգիայի արտադրությունը, ընդամենը	հազ ԳՋ	2209	2220
1.1	այդ թվում՝ ՋԷԿ-երում	"-	1400	1420
1.2	Կաթսայատներում	"-	809	800
2	Ջերմային էներգիայի կորուստները	հազ ԳՋ	477	480
2.1	Նույնը՝ %-ով 1 -ին կետի նկատմամբ	%	21,6%	21,6%
3	Ջերմային էներգիայի օգտակար առաքումը, ընդամենը	հազ ԳՋ	1732	1740
3.1	այդ թվում՝ Կենտրոնացված ջեռուցման համար	"-	980	980
3.1.1	որից՝ ՋԷԿ-երից	"-	331	335
3.1.2	Կաթսայատներից	"-	649	645
3.2	Արդյունաբերական կարիքների համար	"-	752	760

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2003-2004թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՒՆԵՐԸ**

1	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2003թ. սպասվող	2004թ. կանխատեսվող
1	2	3	4	5
1	Բնական գազի ներկրում	մլն մ մ <sup>3</sup>	1150	1250
2	Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում	մլն մ մ <sup>3</sup>	101,2	94
2.1	Նույնը՝ %-ով 1 -ին կետի նկատմամբ	%	8,8%	7,5%
3	Գազի ծախսը սեփական կարիքների համար	մլն մ մ <sup>3</sup>	8,35	8,75
3.1	Նույնը՝ %-ով 1 -ին կետի նկատմամբ	%	0,7%	0,7%
4	Մղվել է ստորգետնյա պահեստարաններ	մլն մ մ <sup>3</sup>	70	70
5	Վերցվել է պահեստարաններից	մլն մ մ <sup>3</sup>	65	70
6	Բնական գազի առաքումը սպառողներին	մլն մ մ <sup>3</sup>	1035,45	1147,25
6.1	որից՝ Ջերմային էլեկտրակայաններ	"-	540	600
6.2	Արդյունաբերություն	"-	190	220
6.3	Բյուջետային կազմակերպություններ	"-	19	14
6.4	Բնակչություն	"-	140	170
6.5	Կենտրոնացված ջեռուցման համակարգ	"-	34	28

6.6	Այլ սպառողներ	"-	112,45	115,25
-----	---------------	----	--------	--------